ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԳՐԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Գոլրոխ Քեշավարզ Ռահբարի
«Հայ Իրանական քաղաքաշինական առնչությունները մ.թ.ա. 8-րդ - մ.թ.7-րդ դարերի
ճարտարապետության համատեքստում» ատենախոսության վերաբերյալ.
ներկայացված ԺԸ.00.01 «ճարտարապետություն» մասնագիտությամբ
ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գոլրոխ Քեշավարզ Ռահբարի ատենախոսությունը նվիրված է հայ-իրանական քաղաքաշինական առնչություններին՝ ճարտարապետության համատեքստում, ներառելով մ.թ.ա. 8-րդ - մ. թ. 7-րդ դարերի միջակայքում ընկած ժամանակահատվածը, որն ընդգրկում է հին աշխարհի քաղաքաշինության օրինակների հետ զուգահեռները, որոնց առաջացման և կառուցապատման առանձնահատկություններին անդրադարձել է կատարվել աշխատանքի համապատասխան գլուխներում:

Քաղաքաշինական փոխառնչությունների թեման ճարտարապետության հիմնարար հասկացություններից է, որ կանխորոշում է ճարտարապետության զարգացման միտումները, տվյալ դեպքում նաև ունի տարածաշրջանային նշանակություն:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է ներկայիս կայուն ճարտարապետության խնդիրներով, որի կապակցությամբ հարցը ոչ միայն պատմամշակութային ուսումնասիրության կարևորության է, այլ նաև Նրանց ռեգիոնալ առանձնահատկությունների հետազոտությունը գիտական անհրաժեշտություն է: Միևնույն ժամանակ ակնարկվող նյութը, ունենալով միջազգային փոխառնչություններ, դեռևս անհրաժշտ գիտական հանրայնացման գործընթացներով չի անցել: Այն կարիք ունի հակիրճ համադրման, և գիտական հանրությանը մանրամասնություններով ներկայացնելու:

Հայերեն լեզվով շարադրված ատենախոսությունն ընդգրկում է 130 տեքստային էջ և 122 էջ հավելվածներ՝ 230 պատկերներով: Կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան եզրահանգումներով, ընդհանուր եզրակացություններից, 132 անուն օգտագործած գրականության ու հրապարակումների ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում ու հիմնավորվում են հայ-իրանական քաղաքաշինական առնչությունները՝ քննվող ժամանակաշրջանի (մ.թ.ա. 8-մ.թ. 7-րդ դդ.) ճարտարապետական համատեքստում, որը ներառում է միջազգային զուգահեռները նույն ժամանակաշրջանի միջագետքյան, հունահելլենիստական ու

հոմոմեական քաղաքաշինական մոտեցումները: Աշխատության հիմքը պատմաշխարհագրական աղբյուրագիտական ու հնագիտական տվյալներն են, որի վրա խարսխվում են հետազոտողի համեմատական ու վերլուծական մոտեցումները: Օգտագործված է արժեքավոր և բազմալեզու հարուստ գրականություն:

Ատենախոսության նպատակն է համեմատական կարգով և վերլուծականորեն ուսումնասիրել Հին Հայաստանի և Հին Իրանի համապատասխան բնակավայրերը՝ ներդնելով դրանց տվյալները ժամանակաշրջանի իշխող սկզբունքներում, ինչպիսիք են հունական, հոմոմեական և հելլենիստական քաղաքաշինական առանձնահատկությունները, որոնք հիմք են ծառայել ողջ մարդկային պատմաքաղաքաշինական մշակույթի կերտման գործընթացներում:

Ատենախոսության մեթոդը քաղաքաշինության պատմական փաստագրական և որակական հետազոտությունն է, արդյունքների համադրումն ու համակարգումը: Համապատասխանաբար այն ներառում է նաև երկու երկրների տարածքներում առանձնացված բնակավայրերի համեմատական վերլուծությունը՝ տարածաշրջանային զուգահեռների օրինակով: Ուսումնասիրությունը ներառում է ինչպես արխիվային նյութերի, այնպես էլ էքսպեդիցիոն հետազոտությունների արդյունքների քննական վերլուծությունն ու դաշտային այցելություններ: Հետազոտության շրջանակում պատմական բնակավայրերը դիտարկվել և վերլուծվել են պատմահնագիտական մեկնաբանությամբ:

Ատենախոսության տրամաբանական հենքը բովանդակում է հետևյալը. Առաջին գլուխը բովանդակությամբ տեղեկատվական բնույթի է. որի շրջանակում ատենախոսը հետազոտել ու ներկայացրել է հին աշխարհում քաղաքաշինական ու ճարտարապետական զարգացումների պատմական տեսական համառոտ ակնարկը, վերլուծել քաղաքաշինական մշակույթի ծագման՝ քաղաքների ֆիզիկական ձևագոյացման սկզբունքները, անդրադարձել է դրանց աշխարհագրական տեղադիրքերին, քաղաքային միջավայրերի կառուցապատման առանձնահատկություններին, տարածաշրջանային երկրների քաղաքների փոխառնչություններին, կրած ազդեցություններին և այլն:

Ներկայացված ատենախոսությունում որպես գիտական նորույթ կարող են նշվել տվյալ ժամանակաշրջանում Իրանական և հայկական բնակավայրերի կազմավորման վերլուծությունը, համեմատական վերլուծությունը դասական և վաղ միջնադարյան օրինակների հետ: Առաջին անգամ ներկայացված աշխատությունում մշակված մեթոդքանության հենքի վրա կատարվել է պատմական զարգացման և աշխարհագրական պայմանների ընդհանուր ուսումնասիրություն, իրականացվել է

լանդշաֆտի և քաղաքային հատակագծումների առանձնահատկությունների և հորինվածքի ձևերի ուսումնասիրություն, կատարվել է հետազոտության սահմաններում ընդգրկված բնակավայրերի քաղաքաշինական վիճակի հետազոտում:

1-ին գլխում հիմնավորվել է, որ դիտարկվող ժամանակաշրջանում հետազոտության սուբյեկտ հանդիսացող հնագույն քաղաքները (հունական, հելլենիստական, հռոմեական, հայկական ու իրանական) կառուցվել կամ վերականգնվել են միջհաղորդակցության, փոխառնչությունների և փոխազդեցությունների հիման վրա, իսկ կատարված հետազոտություններից ստացված արդյունքների հիման վրա ի մի են բերվել հին աշխարհի քաղաքաշինական մշակույթի զարգացման տեսական դրույթները՝ անդրադառնալով հնագույն քաղաքների հորինվածքային դասակարգման հարցերին: Նշվել է, որ հին իրանական բոլոր քաղաքները պատշաճ զարգացած են եղել քաղաքային հատակագծման առումով և ներկայացել որպես լավ կազմակերպված քաղաքային բնակավայրեր: Դրանց ուսումնասիրությունը հավաստում է այն պնդումը, որ դեռևս հնագույն ժամանակներում Իրանում քաղաքաշինությունն ունեցել է իր հաստատուն և ամուր հիմքերով ու սկզբունքներով զարգացման ընթացք: Այդ քաղաքները սովորաբար կառուցվում էին սուրբ լեռների յանջերին ու ջրակունքների մոտ, հարկավ նկատի էին առնվում աշխարհագրական ու բնակլիմայական պայմանները, հասարակության հոգևոր հավատալիքներն ու կրոնական ավանդույթները, տեղական սովորույթներն ու սոցիալ-տնտեսական միջավայրը և այլ գործոններ, որոնք էլ իրենց անմիջական ազդեցությունն են ունեցել քաղաքների հատակագծային հորինվածքի, ձևագոյացման, կառուցապատման, և հընթացս բնակավայրերի ընդլայնման վրա:

Քաղաքների ռազմավարական ու տնտեսական նշանակության հանգամանքը հաշվի առնելով, դրանք մասնավորապես կառուցվում էին ռազմական ու առևտրային տարանցիկ ճանապարհների վրա, ներդրվում էր հիպոդամոսի՝ կանոնավոր ուղղանկյունաձև հատակագծման սկզբունքի կիրառումը, հ, որի կանոնավորությանը նպաստում էր բնակավայրի աշխարհագրական տեղադիրքը: Հին Արևելքի ու Արևմուտքի մերձեցման հատույթում առաջացած անտիկ ու հելլենիստական քաղաքաշինական դրսևորումներն արժանի կերպով իրենց արտացոլումն են գտել հայկական քաղաքների օրինակներում (Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Գառնի և այլն): Ուսումնասիրված քաղաքային բնակավայրերի ներկայացված դասակարգերում բնորոշող տարրը ամրոցն է (կառուցապատման կենտրոնում կամ բերդաքաղաքի պարիսպների նկատմամբ պարագծային դասակարգմամբ, կամ բերդաքաղաքի կամ բնակելի թաղամասերի նկատմամբ

հեռացված տեղադիրքով), թեև երբեմն հանդիպում են բնակավայրեր առանց ամրոցի: Հարկ է նշել, որ հնագույն բնակավայրերից կատարվել է աստիճանական անցում դեպի քաղաքների՝ առանց ամրոցների, ուր առկա են ազատ պարագիծ ունեցող կամ երկրաչափական ուղղանկյուն պարագծով ու կանոնավոր հատակագծման սկզբունքով կառուցված կամ տեղանքին հարմարվող ազատ պարագիծ ունեցող բնակավայրերը: Աշխատությունում Սասանյանների ժամանակաշրջանը հիշատակվում է որպես հին Իրանում քաղաքների քանակական աճի ու քաղաքաշինական մշակույթի զարգացման շրջափուլ, բայց սրանով հանդերձ, կարևորվել է պարթևների և հռոմեացիների ազդեցությունը դրանց կառուցողական արվեստների ու գործունեության վրա: Շինարվեստի առումով, նշվել է բետոնի կիրառությունը (նաև քարն ու հավանգը) ուղեկցում էր հռոմեացիների քաղաքաշինական ու կառուցողական գրեթե բոլոր նախաձեռնությունները, քանի որ նրանք դեմ էին հույների նման մարմարի օգտագործման մեթոդին: Քաղաքային բաղկացուցիչ էլեմենտների առկայությունը քննարկվող երկու երկրներում առկա քաղաքներում, հուշում է, որ հնում քաղաքային բնակավայրերը բաժանվել են տարբեր մասերի՝ ունենալով առանձին տարածքներ և օգտագործման տարբեր նպատակներ, և փոխկապակցված լինելով միմյանց հետ՝ հանգեցրել են հասարակության տարբեր դասերի կազմավորմանն ու համակարգմանը:

Երկրորդ գլխում ներկայացվել են Հին Իրանի հնագույն և վաղ միջնադարյան ժամանակաշրջանների տվյալները՝ բնակավայրերի ձևագոյացումը, կառուցապատումն ու զարգացումը՝ Էլամական, Մարական, Աքեմենյան, Պարթևական, Սասանյան թագավորությունների ժամանակաշրջաններում (մ.թ.ա. 8 - մ.թ. 7-րդ դդ.): Մանրամասնորեն ներկայացվել են դրանց առաջացման հիմքում ընկած պատճառներն ու գործոնները, այդ թվում՝ տարածաշրջանային երկրների հետ ունեցած փոխառնչություններն ու կրած ազդեցությունները: Էլամական ու Մարական քաղաքային բնակավայրերի առնչությամբ, հետազոտողը փաստել է, որ դրանք անցել են պատմաքաղաքական, սոցիալական, քաղաքաշինական, միջավայրային կառուցապատման ու ճարտարապետական տրանսֆորմացիաների միմյանց հաջորդող շրջափուլեր՝ Աքեմենյանների նվաճումից մինչ Սասանյանների շրջանը: Ներկայացնելով Աքեմենյան, Պարթևական, Սասանյան ընդգրկված քաղաքները, հետազոտողը հիմնավորել է, որ դրանք եղել են լավ զարգացած՝ որպես քաղաքային հատակագծման, քաղաքաշինական ու բնակավայրային կենտրոններ, իսկ տարածական կառուցվածքի առումով ձևով եղել են հոմոգենես՝ կազմակերպված փոխհատվող փողոցներով և ուղղված աշխարհի չորս կողմերին: Համաձայն հետազոտողի ուսումնասիրության, Աքեմենյան քաղաքների քաղաքաշինական ու ճարտարապետական արվեստներում

իրանական բնորոշ գծերի կողքին նկատվում են մարական, ասորական (միջագետքյան), ուրարտական, հունական տարրեր, մինչդեռ պարթևական քաղաքները կրել են հունահելլենիստական ու հռոմեական քաղաքաշինական ու ճարտարապետական ազդեցություններ, իսկ Սասանյան քաղաքները հիմնադրվել են հասարակության հիերարխիկ կառուցվածքը նկատի առնելով, տնտեսական, մշակութային, կրոնական, վարչական, ռազմական նպատակներով՝ հիմնականում շրջանաձև և ուղղանկյունաձև հատակագծային հորինվածքներով: Վաղագույն քաղաքների առաջացման հիմնական գործոնների թվում նախ և առաջ կարևորվում են աշխարհագրական, կրոնական և ռազմական ասպեկտները: Աշխարհագրական գործոնները ներառում են մասնավորաբար բավարար ջրային ռեսուրսների հասանելիության և միևնույն ժամանակ գետերի վարարումների վտանգների պարագային անվտանգության ապահովման հանգամանքները:

Երրորդ գլխում ներկայացվել են Հին Հայաստանի անտիկ ու վաղ միջնադարյան քաղաքային օրինակները (ուրարտական, Երվանդական, Արտաշեսյան և Արշակունյաց թագավորությունների շրջափուլերում՝ մ.թ.ա. 9 - մ.թ. 5/6)՝ անդրադառնալով դրանց ձևագոյացման ու քաղաքաշինական սկզբունքներին, ճարտարապետական կառուցապատման առանձնահատկություններին, փոխառնչություններին, կրած ազդեցություններին և այլ հարցերի: Հիմնավորվել է, որ որ Հին Հայաստանում լանդշաֆտի ու քաղաքաշինական առանձնահատկությունների առումով քաղաքները հիմնադրվել են առևտրային ճանապարհների վրա և գետերի խառնարանում, հիմնականում ունեցել են ռելիեֆային կանոնիկ պահանջներով կառուցվածք, իսկ հատակագծման առումով արվել են երկմաս կազմով, սովորաբար՝ կանոնավոր հատակագծմամբ. առևտրահասարակական ագորատիպ կենտրոններով, կրել են միջագետքյան, հելլենիստական, հունահռոմեական ազդեցություններ: Հետազոտությամբ նշվել է, որ հայկական բնակավայրերի ձևագոյացումը, քաղաքների կառուցապատումն ու դրանց ներքին կյանքի զարգացումներն անքակտելիորեն կապված են նրանցում առկա ճարտարապետական մշակույթի հետ, որը թեև կրել է հարևան քաղաքակրթությունների ազդեցությունը, բայց և այնպես ունեցել է և իր յուրատիպությունը: Հայ վարպետները գործել են ժամանակի համաշխարհային մշակույթի միտումներին համընթաց, Արևմուտքից և Արևելքից ընդունելով լավագույնը, առաջադիմականը, վերամշակելով դրանք ու ադապտացնելով իրենց՝ համադրելով նոր մտածողության ու սեփական մտապատկերի հետ: Ըստ հատակագծային հորինվածքի դրանք արվել են ազատ հատակագծմամբ (կամ տարերայնորեն զարգացող), երկրաչափական կանոնավոր համակարգով, խառը

կառուցապատմամբ (սա մեծապես բնորոշ է ուրարտական քաղաքաշինությանը), դարավանդային համակարգի ձևով:

Ընդհանուր եզրակացություններում կատարվել է նյութի համեմատական տվյալների ամփոփումը. բնութագրվել է հին և վաղ միջնադարյան ժամանակաշրջանի անցումային նշանակությունը համընդհանուր ճարտարապետության համատեքստում, առանձին գլուխներով (II և III գլուխներ) բնութագրվել է ժամանակաշրջանի իրանական և հայկական քաղաքաշինական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ժամանակաշրջանի դասական և վաղ միջնադարյան քաղաքաշինական զարգացման տենդենցները (I գլուխ), հավուր պատշաճի ամբողջացվել է հայ-իրանական ուսումնասիրվող փոխառնչությունների դերը հին և վաղ միջնադարյան քաղաքաշինական և ճարտարապետական զարգացումների համատեքստում:

Ատենախոսությունում ներկայացված դրույթներն ու վերջնարդյունքները անհրաժեշտ են Իրանում և Հայաստանում այս թեմայով զբաղվող մասնագետների, պետական և մասնավոր կառույցների համար, ինչպես նաև քաղաքաշինության տեսության ու պատմության ուսումնասիրության ոլորտում:

Այնուամենայնիվ, առկա է մի քանի նկատառում.

- Ինչպես տեքստային, այնպես էլ գրաֆիկական նյութերում բացակայում է համակարգված ներկայացումը՝ ընդհանրացնելով բավականին ծավալուն վերլուծական նյութով բացահայտված առանձնահատկությունները, ընդհանրություններն ու տարբերությունները:
- Տեքստային մասի շարադրանքում առկա են ոչ հասկանալի կամ տեխնիկական տեքստում չկիրառվող եզրույթներ (օր.՝ Քաղաքներն ու քաղաքաշինությունը նշանակալի սոցիալական միտումներ են, կարճատև շրջափուլում վերակառուցման էին ենթակա, քաղաքաշինական առնչությունների զուգահեռումները, քաղաքի հատակագծային կտրվածքի ելևէջները և այլն):
- Գրաֆիկական նյութերում ներկայացված բնակավայրերի հատակագծերը ցանկալի կլիներ խմբավորել ըստ դասակարգման՝ հատակագծային կառուցվածքի տեսակների, ակնառու կերպով ներկայացնելու ժամանակաշրջանը բնութագրող, սակայն տարածաշրջանի տարբեր բնակավայրերի քաղաքաշինական ավանդույթները ներկայացնող հատակագծերը:
- Նույն սկզբունքով տեքստային մասում ցանկալի կլիներ աղյուսակային կամ դիագրամի տեսքով դասակարգել և ներկայացնել ժամանակի թելադրանքով

բնակավայրերի քաղաքային հատակագծային կառուցվածքում և ճարտարապետական լուծումներում կատարվող փոփոխությունները՝ պայմանավորված ինչպես ժամանակաշրջանի. այնպես էլ աշխարհագրական պահանջներով:

- Տեքստային հատվածում առկա է որոշակի շարադասական բնույթի խմբագրման անհրաժշտություն:

Եզրակացություն: Կատարված է մեծ աշխատանք. թեման արդիական է. նորույթը մեծ կարևորություն ունի տարածաշրջանի տվյալ ժամանակաշրջանը բնութագրող քաղաքաշինական և ճարտարապետական փոխառնչությունների բացահայտման համար, փորձաքննական մասը մեծ կարևորության է և ունի արդիականություն. ատենախոսությունը գրված է գրագետ և բանիմացությամբ:

Հրատարկված 9 հոդվածները միանգամայն արտացոլում են աշխատության տեսական, գործնական որոյթները: Սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը: Վերը շարադրվածը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությանը.

Գոլրոխ Քեշավարզ Ռահբարի «Հայ-իրանական քաղաքաշինական առնչությունները մ. թ. ա. 8-րդ – մ.թ. 7-րդ դարերի ճարտարապետության համատեքստում» թեմայով ատենախոսությունը ավարտուն աշխատանք է. պարունակում է ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակության կարևոր նորույթներ ու լիովին բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման գործող կանոնակարգով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Գտնում եմ, որ Գոլրոխ Քեշավարզ Ռահբարը միանգամայն արժանի է ԺԸ.00.01 Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի

նախագահի տեղակալ,

Ճարտ. թեկն., դոցենտ **Ն.Գ. Պետրոսյան**